ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ **2024թ. նոյեմբերի 8 -ին, N501-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԶԻԿ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ ենթակետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասի, 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի և 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի՝ 06.11.2024թ. թիվ 01/4/07404-2024 գրությունը բացատրություն ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև «Աշտարակ քաղաքի Գրիգոր Ղափանցյանի անվան հ4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նազիկ Նիկոլյանի կողմից 07.11.2024թ. Հ/հ20 գրությամբ ներկայացված բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Աշտարակ քաղաքի Գրիգոր Ղափանցյանի անվան հ4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նազիկ Նիկոլյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝

նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու և աշխատանքային պարտականությունները ոչ պատճաշ կատարելու, մասնավորապես՝ աշխատանքային ժամին աշխատավայրից բացակայելու, աշխատողին՝ աշխատանքային պայմանագրով սահմանված դրույքաչափից ավել աշխատավարձ հաշվարկելու և փոխանցելու համար:

2. Սույն որոշման մասին պատշաճ կարգով իրազեկել Նազիկ Նիկոլյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.11.2024 17:36:59 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ